«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-ի 2022թ.

(6-րդ պայմանագրային տարի)

ՍԱԿԱԳՆԵՐԻ ՃՇԳՐՏՈՒՄ

- ՀՀ կառավարության կողմից ջրային համակարգերը վարձակալության հանձնելու նպատակով միջազգային մրցույթի կազմակերպում,
- 2017-2031 թվականների համար բազիսային սակագների և դրանց ճշգրտման մեխանիզմների ձևավորում և ամրագրում,
- «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ 15-ամյա վարձակալության պայմանագրի ստորագրում:

Համաձայն մրցույթի արդյունքում ձևավորված բազիսային սակագների սցենարի՝ վարձակալության 15 տարիների ընթացքում մանրածախ բազիսային սակագներն աճում են, իսկ այնուհետև նվազում՝ 1-ին տարվա 180 դրամից 2022-2023 թվականներին հասնելով իրենց առավելագույն մեծությանը (212,4 դրամ), իսկ վերջին՝ 15-րդ տարում կազմելով 129,6 դրամ:

Միաժամանակ, բազիսային սակագները յուրաքանչյուր տարի ենթակա են պարտադիր ճշգրտման՝ միայն հետևյալ գործոններով պայմանավորված.

- ✓ մանրածախ ջրամատակարարման ծավալի փոփոխություն,
- ✓ սղաճ,
- ✓ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխություն,
- ✓ ջրային համակարգն այլ նպատակներով օգտագործելուց և խմելու ջուրը ոռոգման նպատակով մատակարարելուց ստացվող լրացուցիչ հասույթով պայմանավորված նվազեցում:

- **Վարձակալության պայմանագրով և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի լիցենզիայի պայմաններով ընկերությունն ունի պարտավորություն՝ բազիսային սակագների ճշգրտման նպատակով յուրաքանչյուր տարի դիմել ՀԾԿՀ:**
- **«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն 09.08.2021թ. հերթական անգամ դիմել է ՀԾԿՀ՝ վարձակալության 6-րդ տարվա (2022թ.) համար ծառայությունների մատուցման բազիսային սակագների ճշգրտման հայտով, որով մանրածախ ծառայությունների մատուցման գումարային սակագինը հաշվարկել է**

223,7 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ):

Հայտով ներկայացված ճշգրտման գործոններ (դրամ/խմ)



Խմելու ջրի սակագների կտրուկ տատանումները չեզոքացնելու, սպառողների համար հնարավորինս կայուն սակագնային քաղաքականություն ապահովելու և սոցիալապես անապահովների համար հնարավորինս նվազ սակագներ սահմանելու նպատակով ՀԾԿՀ-ի, ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ներկայացուցիչներից աշխատանքային խմբի ստեղծում, քննարկումներ և գործող իրավակարգավորումներում փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

- **Վարձակալության պայմանագրի կողմերի միջև 10.11.2021թ. №24 համաձայնագրի ստորագրում, որով առաջիկա 10 տարիների համար վարձակալական վճարի գումարային մեծությունն անփոփոխ թողնելով, սակայն ըստ տարիների փոփոխություն կատարելով, նախատեսվեց խմելու ջրի սակագների համահարթեցում:**
- **Նշված համաձայնագրով պայմանավորված՝ ջրային կոմիտեի առաջարկությամբ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին տրամադրված ԼՋ№0001 լիցենզիայի պայմաններում համապատասխան փոփոխությունների մշակում, քննարկում շահագրգիռ կողմերի (այդ թվում՝ սպառողների շահերը պաշտպանող ՀԿ-ների) հետ և ՀԾԿՀ-ի 23.11.2021թ. №400Ա որոշման ընդունում:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2021 թվականի №400Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի №397Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Օ-Կոմպանի ժեներալ Դեզ

Խմելու ջրի սակագների համահարթեցման գործընթացի շրջանակում սոցիալապես անապահովների համար հնարավորինս նվազ սակագներ սահմանելու նպատակով ՀՀ կառավարության կողմից 2021 թվականի նոյեմբերի 18-ին ընդունվեց №1880-Ն որոշումը, որով պայմանավորված «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի լիցենզիայի պայմանների սակագների ճշգրտման մեթոդիկայում նախատեսվեցին համապատասխան դրույթներ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2021 թվականի N 1880-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի N 1122-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի «Սոցիալապես անապահով ընտանիքների կողմից սպառվող բնական գազի և էլեկտրական էներգիայի սակագների նվազմանն ուղղված միջոցառումների մասին» N 1122-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրում «բնական գազի և էլեկտրական էներգիայի» բառերը փոխարինել «բնական գազի, էլեկտրական էներգիայի և նրանց մատուցվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների» բառերով.

2) նախաբանում «բնական գազի և էլեկտրական էներգիայի» բառերը փոխարինել «սպառվող բնական գազի, էլեկտրական էներգիայի և նրանց մատուցվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների» բառերով

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի 2022թ. սակագների ճշգրտում



Սակագների ճշգրտման հաշվարկներում ներառված մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների

ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

- ✓ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ից ոչ-բնակիչ բաժանորդների բազայի ստացում,
- ✓ Բազայի վերլուծություն, առավել խնդրահարույց սպառողների ցանկի ընտրություն և աշխատանքային խմբերի ձևավորում,
- ✓ Գաղտնիության պահպանման նպատակով մոնիթորինգի մասնակիցներին յուրաքանչյուր օրվա ցուցակի տրամադրում միայն տվյալ օրվա առավոտյան,

- ✓ **Աշխատանքային խմբերի այցելություններ տեղերում, անհրաժեշտ տվյալների գրանցում և լուսանկարում,**
- ✓ **Յուրաքանչյուր օրվա ավարտին գրանցված տվյալների և լուսանկարների ներկայացում ՀԾԿՀ-ի համապատասխան ստորաբաժանում, այդ տվյալների վերլուծություն և խախտման դեպքերի մասով լրացուցիչ ծավալների հաշվարկում:**



Ջրամատակարարման լրացուցիչ ծավալները հաշվարկվել են

1. Ջրոյական սպառում ունեցող սպառողների մոտ՝ մոնիթորինգի արդյունքում գրանցված և ընկերության բազայով ներկայացված ցուցմունքների տարբերությամբ,
2. Ապօրինի ջրօգտագործման, ջրաչափերի շրջանցման, կապարակնիքների բացակայության և այլ խախտումների համար՝ ներանցման խողովակի թողունակությամբ՝ ջրի շարժման 1,5 մ/վրկ արագությամբ և ջրամատակարարման հրապարակված գրաֆիկով:



Այլ դիտարկումներ

Սպասարկման տարածք	Սահմանազատման կետերից դուրս ջրաչափեր	Հողոգրաֆիկ կնիքների բացակայություն	Հակառակ տեղադրված ֆիլտր
Երևանի սպասարկման տարածք	156	14	4
Մարզերի սպասարկման տարածք	499	32	9
ԸՆԴԱՄԵՆԸ	655	46	13





Արձանագրված որոշ դեպքեր

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

№	Սպասարկման տարածք	Այցերի քանակը (հատ)	Արձանագրված խախտումների քանակը, որով հաշվարկվել է լրացուցիչ ջրաքանակ (հատ)	Մոնիթորինգի արդյունքում հաշվարկված լրացուցիչ ծավալ (խմ)
1	Երևանի սպասարկման տարածք	572	190	1 210 383
2	Մարզերի սպասարկման տարածք	1372	243	927 183
	ԸՆԴԱՄԵՆԸ	1944	433	2 137 566

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման 2022 թվականի սակագները

№	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Սակագինը **Սոցիալապես անապահովների** համար (դրամ/խմ՝ ներառյալ ԱԱՀ-ն)	Սակագինը **Մյուս սպառողների** համար (դրամ/խմ՝ ներառյալ ԱԱՀ-ն)
1	**Ընդամենը բաժանորդներին մանրածախ ծառայությունների մատուցման գումարային սակագին, որից՝**	**180.00**	**200.47**
1.1	*խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման համար*	*153.00*	*170.4*
1.2	*ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման համար*	*27.00*	*30.07*
2	**Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող այլ անձանց, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող համայնքներին, համայնքային բյուջետային հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին մեծածախ ծառայությունների մատուցման սակագին՝**		
2.1	*խմելու ջրի մատակարարման մեծածախ ծառայության մատուցման սակագին*		*39.811*
2.2	*ջրահեռացման մեծածախ ծառայության մատուցման սակագին*		*19.906*
3	**«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման սակագին**		**11.267**

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ